ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, *«Զանգակ - 97» հրատ., Ե., 2011, 272 էջ:*



Լեզվական կաղապար հասկացությունը լեզվաբանության մեջ մտավ մաթեմատիկական լեզվաբանության գիտաճյուղի ձևավորման շրջանում, երբ սկսեցին լեզվական երևույթների ձևայնացված նկարագրության փորձերը, մյուս կողմից՝ մասնագետները փորձեցին լեզուն ներառել ԷՀՄ համակարգ, մասնավորապես մեքենայական թարգմանություններ կատարելու նպատակով:

Հայ իրականության մեջ կաղապարման տեսությունը մշակել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, դրանով զբաղվել են պրոֆեսորներ Ս. Գալստյանը և Լ. Հովսեփյանը: Վերջերս այս բնագավառը համալրվեց նոր ուսումնասիրությամբ՝ «Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում», որ հեղինակել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը:

Սույն մենագրությամբ Լ. Խաչատրյանը խորացրել է հարցի քննության շրջանակները և փորձել հայերենի բառակազմական ու ձևաբանական կաղապարները մատուցել բուհական կրթության ծրագրային պահանջներին համապատասխան: Նա հետևում է լեզվական միավորների կաղապարավորման ջահուկյանական տեսությանը, կատարում բառաձևերի ձևայնացված քննություն և մակաբերում դրանց համապատասխան կաղապարները:

Հեղինակը քննության առարկա է դարձրել ժամանակակից հայերենի բառակազմական ու ձևաբանական կաղապարները: Ընդ որում, բառակազմական կաղապարները մատուցվում են բառաբարդման և ածանցման կտրվածքներով, իսկ ձևաբանական կաղապարները տրվում են ըստ գոյականի և բայական բառաձևերի հարացույցների: Հեղինակն առաջարկում է լեզվական կաղապարների տարբերակման որոշակի հիմունքներ և, ըստ այդմ, առանձնացնում է հիմնակաղապարներ, որոնց կառուցվածքային տարբերակները (կառուցատիպերը) դիտում է որպես մասնակաղապարներ:

Գրքի առաջին բաժինը նվիրված է ժամանակակից հայերենի բառակազմական կաղապարների քննությանը (համաժամանակյա մոտեցում): Լ. Խաչատրյանը բառակազմական կաղապարների ձևայնացված քննությունը ակնառու դարձնելու համար կաղապարների բաղադրիչները նշանակում է համապատասխան տառանվանումներով՝ լատինական տառանշաններով՝ որոշակի բանաձևեր արտածելու համար: Քանի որ բառակազմության հիմնական ձևույթները բնութագրվում են ձևաբանական (խոսքիմասային) արժեքով և հիմքի տեսակով, ուստի դրանք ներկայացվում են լատինական

տառանշաններով՝ N (գոյական), V (բայ), S (անփոփոխ հիմք), S̲ (հնչյունափոխված հիմք), A (ածական), իսկ ածանցները՝ v - բայական, s - գոյականական, a - ածականական և այլն:

Առաջին գլխում քննվում են բառաբարդման կաղապարները, որոնք ներկայացվում են երկու կտրվածքով՝ համադրական (հոդակապով՝ NjN - դասասենյակ, անհոդակապ՝ NV – կաթնաղբյուր), և վերլուծական. վերջինը տրվում է անվանական և բայական ենթատեսակներով, որոնք մատուցվում են համապատասխան բանաձևերով, ինչպես՝ N(p)N - տող առ տող, S^N-(c)-S^N – հայր ու որդի, S^V-(c)-S^V – տանել ու բերել, S^N-S^V – միտք անել և այլն:

Հաջորդ գլխում հեղինակն անդրադարձել է բառակազմության երկրորդ եղանակի՝ ածանցման կաղապարների քննությանը՝ առանձնացնելով նախածանցավոր և վերջածանցավոր կազմությունների հիմնակաղապարներն ու մասնակաղապարները:

Նախածանցման կաղապարները *տրվում են բաղադրության հիմքի հնարավոր կառուցատիպերով, ինչպես՝ sS - անտուն, դժբախտ, s(sS) - անտարբեր, ընդառաջ, s(Ss) - աներևույթ, անդրլեռնային, s[(Ss)s] - անարժանավոր, s[(Sss)s] - անտեսանելիորեն, անզիջողականորեն և այլն: Նախածանցման կաղապարները քննվում են նաև ըստ հիմքի կառուցվածքային տեսակի, ինչպես՝ s[(SS)] - աներկմիտ, անժուժկալ, s[(SjS)] - անպտղաբեր, անշնորհակալ և այլն:*

Վերջածանցման կաղապարները *տրվում են ըստ բաղադրության հիմքի ձևույթների քանակի, ինչպես՝ Ss – մեղմաբար, հայկական, (Ss)s – հարկավորաբար, ահեղագույն, [(Ss)s]s - երկյուղածաբար, իշխանականորեն, (sS)s - բաղհյուսական, անապատային, (sjS)s - բացահայտաբար, ենթամաշկային, [s(Ss)]s - անարժանաբար, աներևութական, [sj(Ss)]s - համալսարանական, հակադրականություն և այլն: Վկայվում են նաև բարդ հիմքերով կառուցվածքներ, ինչպես՝ (SS)s - դյուցազնական, ակներևապես, (SjS)s - գորգագործարան, դատապարտյալ և այլն:*

Աշխատանքում դիտարկվում են երկվերջածանցավոր, եռածանց, սակավաթիվ՝ քառածանց բաղադրությունների կաղապարները, և առանձնացվում են դրանցում գործառական բեռնվածություն ունեցող վերջածանցները, ինչպես՝

(Ss)s - հարկավոր-աբար (երկածանց)

[(Ss)s]s - խորհրդավոր-աբար (եռածանց)

{[(Ss)s]s}s - պահպանողական-ություն (քառածանց):

Մենագրության երկրորդ բաժինը նվիրված է ժամանակակից հայերենի ձևաբանական մակարդակի միավորների ձևայնացված նկարագրությանը, մասնավորապես գոյականի և բայական բառույթի հարացույցների շարքերին, որոնք տրվում են ըստ կարգերի քանակի, կարգանիշ ձևույթների դիրքի և պարտադրականության: Այսպես, երկրորդ գլխում գոյականական բառաձևերի հարացույցների կաղապարները մատուցվում են երեք կտրվածքով՝ հոլովակազմության, թվակազմության և առման կարգի դրսևորումներով:

Գոյականի հոլովակազմության կաղապարները տրվում են՝ նկատի ունենալով հոլովական հիմքերի գործառական դերը հոլովման համակարգում (անփոփոխ, հնչյունափոխված և բաղադրյալ հիմքեր): Այնուհետև դիտարկվում են առաջին և երկրորդ

կարգի հոլովանիշ վերջավորությունների և հոլովական հիմքերի զուգորդելիության հնարավորությունները, տրվում են նրանց կաղապարները:

Հոլովակազմական կաղապարները *բնութագրվում են հիմքի կառուցատիպերով և վերջավորություններով (հոլովիչներով): Ըստ դիրքի և գործառական արժեքի՝ հոլովիչները բաժանվում են երկու կարգի՝ առաջնային հոլովական վերջավորություններ (հանդես են գալիս սեռական հոլովում՝ ի, ու, ոջ, վա, ց և այլն) և հոլովական թեքույթներ (հանդես են գալիս թեք հոլովներում): Ընդ որում՝ երկրորդ կարգի թեքույթները կարող են հաջորդել կամ առաջին կարգի հոլովիչներին (ընկեր-ոջ-ից, ընկեր-ոջ-ով. (Sa)b), կամ կարող են դրվել գոյականական պարզ հիմքի վրա (անտառ-ից, անտառ-ով, անտառ-ում. (S)b):*

Ըստ կազմիչ տարրերի քանակի, հոլովական կաղապարները լինում են՝ երկանդամ – ընկեր-ոջ (S)a, եռանդամ – ընկեր-ոջ-ով (Sa)b), քառանդամ - ամառ-վա-ն-ից [(Sa)d]b և այլն:

Բազմանդամ հոլովական կաղապարները պայմանավորված են կաղապարը եզրափակող հոդանիշ մասնիկներով, ինչպես՝ աղջկ-ա-ն-ից-ս. [(Sa)d)b]c և այլն:

Թվակազմական կաղապարները *տրվում են ըստ հայերենի ութ կարգի թեքույթների գործառական արժեքի (-եր, -ներ, -իկ, -այք, -ք, -անք, -ենք, -ոնք), ընդ որում՝ վերջավորություններով տարբերվող ձևերը դիտվում են թվակազմական կաղապարներ, իսկ ձևավոր հիմքերով տարբերակվող ձևերը՝ մասնակաղապարներ:*

(-եր). S(a)c - բա՛ռ /բառ-ե՛ր, հո՛ղ /հող-ե՛ր
ա. S (ab)c - գի՛ր /գ(ր)ր-ե՛ր, ջո՛ւր /ջ(ր)ր-ե՛ր
բ. S (ad)c - հա՛րս/ հարսն-ե՛ր, ե՛զ/ եզն-ե՛ր
գ. S(abd)c - մու՛կ /մ(ր)կն-ե՛ր, ձո՛ւկ /ձ(ր)կն-ե՛ր և այլն:

Գոյականի առման կաղապարները տրվում են իրենց երկու դրսևորումներով՝ որոշյալության և ստացականության ենթակարգերով: Որոշյալության կաղապարները մատուցվում են ը, ն հոդերի և հիմքի կառուցատիպերի քննության համատեքստում.

ծառ - եր-ը. S+a+c
բ(ր)ն-եր-ը. S+a+c
թռռն-եր-ը. S(+d)+a+c
մ(ր)կն-եր-ը. S(+d)+a+c
բ(ր)ն-եր-ի-ն. S+a+b+c
թռռն-եր-ի-ն. S(+d)+a+b+c
մ(ր)կն-եր-ի-ն. S(+d)+a+b+c
և այլն:

Ստացականության ենթակարգի ս, դ հոդերը մատուցվում են այնպիսի հիմքերի զուգորդելիության հետ, որոնք ունեն՝ ա) հոլովանիշ թեքույթներ. անտառ-ից-ս S(b₁(+c)), բ) թվանիշ մասնիկներ. անտառ-ներ-ս S(a(+c)), գ) թվանիշ և հոլովանիշ մասնիկներ. անտառ-ներ-ից-ս (S(+a(b₁(+c))):

Այս բաժնի երրորդ գլուխը նվիրված է համադրական և վերլուծական բայաձևերի հարացույցներին և դրանց կաղապարների քննությանը:

Համադրական բայաձևերը տրվում են ըստ վերջավորությունների դասերի.

ա) եմ / ամ տիպի վերջավորություն ունեցողների դաս.

(a+)S+b+c. (կ-) տես-ն-եմ, (չ-) տես-ն-եմ, (a+)S+c. (կ-) կարդ-ամ,

բ) ի տիպի վերջավորություն ունեցողների դաս.

(a+)S+b+c. (չ-) վազ-եց-ի, (a+)S(+b)+c. (չ-) զարկ (-եց)-ի:

գ) նախամասնիկագուրկ (շեշտավոր) ձևերի դաս.
S(+b(+c)). գա՛րկ, գարկ(-եց) - է՛ք, S+b(+c). խաղ-ա՛, խաղ-աց-է՛ք:

Վերլուծական բայաձևերի կաղապարները մատուցվում են երկու բաժանումով.

ա) կախյալ դերբայ + օժանդակ բայ կառուցատիպով,

բ) ստորոգումային հիմք + բառ-մասնիկ կառուցվածքով:

Կառուցվածքային առաջին տիպերը բնութագրվում են կախյալ դերբայներով և դրանց կառուցատիպերով, որոնցից մակաբերվում են դրանց հնարավոր մասնակաղապարները: Հեղինակը նկատում է, որ դերբայի կառուցվածքում հնարավոր են երեք կարգի մասնիկներ՝

ա) բաղադրության - քերականական՝ թռչում եմ - էի. [S+e+c^1]+C,

մտնելու եմ - էի. [S+e+c+c^2]+C, չեմ - չէի մտնի. C+[S+e+c^5],

բ) սեռանիշ՝ խաղացնելու եմ - էի. [S+(ad^1)+c+c^2]+C,

գրվելու եմ - էի. [S(+d)+c+c^2]+C, չեմ - չէի խաղացնի. +[S(+ad^1)+c^5],

գ) կերպանիշ (բազմապատկական)՝ ջարդոտելու է - էր. [S+(b)+c+c^2]+C,

կոտրատել է - էր. [S(+b)+c^3]+C, չեմ - չէի կոտրատի. C+[S(+b)+c^5]:

Վերլուծական բայաձևերի դերբայական հիմքում հնարավոր են մեկից ավելի քերականական մասնիկների զուգորդություններ, ինչպես՝

[S+e(+b)+c+c^2]+C. թռչկոտելու է, [S(+b(+d))+c^3]+C. ջարդոտվել է և այլն:

Ստորոգումային հիմքով վերլուծական կաղապարներ են կազմում հարկադրական եղանակի և հրամայական եղանակի ժխտական խոնարհման բայաձևերը: Այդպիսի բայաձևերի հիմքը, առանձին վերցրած, ստորոգումային հատկանիշ ունի և կարող է հանդես գալ ստորոգյալի պաշտոնով, հմմտ.

պիտի նստեմ. C_1+[S+c], պիտի նստեցնեմ. C_1+[S(+ad^1)+c],

պիտի կոտրատի. C_1+[S(+b)+c], պիտի կոտրատվի. C_1+[S(+b(+d))+c],

մի՛ գրիր. C_2+[S+c], մի՛ փախցնիր. C_2+[Se^0+d^1+c],

մի՛ կոտրատիր. C_2+[S(+b)+c], մի՛ կոտրատվիր. C_2+[S(+b(+d))+c] և այլն:

Հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է բայաձևերի բոլոր դրսևորումներն իրենց հնարավոր հիմնակաղապարներով և մասնակաղապարներով: Նյութի մատուցման այս եղանակն ավելի որոշակի է դարձնում բայական համակարգի կառուցատիպերի ընդհանրություններն ու յուրահատկությունները և նպաստում լեզվական միավորների ձևայնացված նկարագրության ամբողջացմանը:

Մենագրության գիտատեսական արժեքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն խմբագրել է դոցենտ Հովի. Նազարեթյանը, հրատարակության են երաշխավորել բան. գիտ. դոկտոր Ա. Աբաջյանը և բան. գիտ. դոկտոր Ս. Հայրապետյանը, իսկ աշխատանքը տպագրվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

Պրոֆ. Լ. Խաչատրյանի սույն մենագրությունը լուրջ ներդրում է հայերենի լեզվական իրողությունների ձևայնացված նկարագրության բնագավառում: Այն կարող է օգտակար լինել հայոց լեզվի ուսուցման դպրոցական և բուհական մակարդակներում, ինչպես նաև կարող է նպաստել լեզվի կառուցվածքային միավորների համակարգային քննությանն ընդհանրապես և դրանց ուսուցմանը՝ մասնավորապես:

ԵԶԵԿՅԱՆ Լ. Կ.
Բանասիրական գիտությունների դոկտոր